

## ՄԵՐ ԱՆԿԻՒՆԷՆ

### Հայաստանի Պետական Գանձի Չարաշահումները

Վերջերս կայացած մամուլային ասուլիսի մը ընթացքին, Բաղդադի քաղաքի (կորուպցիայի) եւ կաշառակերութեան դէմ պայքարող Միջազգային Թափանցիկութիւն (Transparency International) կազմակերպութեան Երեւանեան գրասենեակի ներկայացուցիչները հրապարակեցին իրենց ուսումնասիրութեան արդիւնքները, որոնք ցոյց կու տան, թէ ինչպէս կը մսխուին Հայաստանի պետական գանձի գումարները եւ ինչպիսի չարաշահումներ կը կատարուին յօգուտ պետական պաշտօնեաներու ու անոնց անմիջական հարազատներու:

Ներկայացուած օրինակներու շարքին կը յիշուի ոստիկանութեան կողմէ օգտագործուող, ալիքի չարաշահումները, որոնք գնումներ, որոնք իւրաքանչիւրին համար վնասուած է 2000 տոլար, մինչ այդ նոյն արժեքը Ռուսաստանի մէջ կ'արժեքն առաւելագոյնը 115 տոլար: Կը տրուի նաեւ օրինակը Ֆինանսներու նախարարութեան կողմէ Դիլիջանի մէջ կառուցուող ուսումնական շէնք կեդրոնին, որու վրայ պետութիւնը ցարդ ծախսած է աւելի քան 70 միլիոն տոլար:

Նոյն մասնագետները կը տեղեկացնեն որ, փոխանակ նուազագույն կազմակերպելու եւ ամենէն նպաստաւոր գինով պետութեան համար գնումներ կատարելու, պաշտօնեաները այժմ նոր ձեւեր կը կիրառեն: Իրենց հետ սերտ կապեր ունեցող ընկերութիւններ ստեղծելով, պետութեան փողերով գնումներ կը կատարեն նոյնիման այդ ընկերութիւններէն:

Չարաշահումներու շարքը երկար է ու անոնց մանրամասնութիւններուն կարելի է ծանօթանալ կազմակերպութեան կայքէջին վրայ:

Ներայացուած այս իրավիճակը կ'առաջնորդէ ժողովուրդի ազատագրման, քանի որ շուկայի վրայ կը նուազի մասնակիցներու թիւը եւ տնտեսութիւնը կը կեդրոնացայ սահմանափակ թիւով մարդոց մօտ, որոնք կը կուտակեն ամբողջ հարստութիւնը, ժողովուրդի մեծ մասը զգելով ետին:

Այս երեւոյթները պատճառ կը դառնան նաեւ արտագաղթի, որ կը հանդիսանայ հայաստանի առջեւ ծագող հիմնական մարտահրաւերը ու կը դասուի ազգային անվտանգութեան մակարդակի հարց՝ մեր ժողովուրդին համար:

Տնտեսական ծանր պայմաններու մէջ գտնուող երկրի մը պարագային նման շոյալուսիւններն ու չարաշահումները կը մնան անընդունելի եւ դատապարտելի: **«ՄԱՍԻՍ»**

## Թրքական Կառավարութիւնը Պետականացուցած է Տիարապէրի Սուրբ Կիրակոս Եկեղեցին

Մինչ Տիարապէրի մէջ կը շարունակուին բախումները Թրքական բանակին եւ Քուրդ յեղափոխականներուն միջեւ, Թրքական կառավարութիւնը որոշում կայացուցած է պետականացնել շրջանին մէջ գտնուող հայկական Սուրբ Կիրակոս եկեղեցին:

Թուրքիոյ նախարարներու Խորհուրդի որոշումով Տիարապէրի Սուրբ շրջանին մէջ գտնուող բոլոր կառուցները, որոնց շարքին Սուրբ Կիրակոսը, պետականացուած են:

Այս կապակցութեամբ Թրքական Խորհրդարանի հայ անդամ Կարօ Բաբեյան հարցում ուղղած է կառավարութեան, պարզաբանումներ պահանջելով պետականացման որոշումի մասին:

Ժողովուրդներու Դեմոկրատական քուրդամէտ կուսակցութեան ցանկով ընտրուած Բաբեյան հարց տուած է նաեւ թէ, փոքրամասնութիւններու պատկանող կառուածներու պետականացումը արդեօ՞ք չի հակասեր Լոզանի Դաշնագրի տրամադրութիւններուն:

Մերձաւոր Արեւելքի ամենամեծ եկեղեցիներէն մէկը նկատուող Սուրբ Կիրակոսի վերաբացումը եւ օծումը տեղի ունեցած էր 2011-ի

Հոկտեմբերի 22-ին, իսկ առաջին պատարագը՝ մէկ օր յետոյ՝ Հոկտեմբերի 23-ին:

Սուրբ շրջանին մէջ գործող հայկական Սուրբ Կիրակոս եկեղեցին պետականացնելու որոշումին շուրջ զաւեշտալի պարզաբանում տուած է Թուրքիոյ Հիմնադրամներու վարչութեան տնօրէն Ադնան Էրթեմ:

Պոլսոյ մէջ լուս տեսնող հայկական «Ակօս» թերթի հետ զրոյցի ժամանակ Թուրքիոյ Հիմնադրամների վարչութեան տնօրէն Ադնան Էրթեմը յայտարարած է թէ, Սուրբ շրջանին մէջ գտնուող բոլոր շինութիւններու պետականացումը ուղղուած չէ պատմական կառուցներուն: Ան պնդած է թէ, պետականացման ծրագիրով նախատեսուած է պահպանել այդ տարածքին մէջ գտնուող պատմական կառուցները, որոնց շուրջ բազմաթիւ անօրինական շինութիւններ կառուցուած են:

Սուրբ Կիրակոսի վերանորոգումը իրականացուած էր Տիարապէրի հայերուն եւ Տիարապէրի քաղաքապետարանի աջակցութեամբ եւ վերաբացումը էր որպէս գործող եկեղեցի:

## Ս. Չատկուայ Առթիւ Ս. Ղեւոնդ Մայր Տաճարին Մէջ Բազմահազար Հաւատացեալներ Ներկայ Եղան Եկեղեցական Արարողութեան



Եկեղեցական արարողութեան անարտիւն, Սրբազան Հայրը կ'արձակէ իրադադրութեան սպիտակ աղաւնի

Անցեալ Կիրակի, աշխարհի քրիստոնէաները ամէնուրեք տօնախմբեցին Քրիստոսի հրաշափառ Յարութեան տօնը: Պարագան նոյնն էր նաեւ Պրոպագանդի առաջնորդանիստ Ս. Ղեւոնդ Մայր Տաճարին մէջ: Չատկուայ Ս. Պատարագը մատուցեց Արեւմտեան Թեմի Առաջնորդ Գերշ. Տ. Յովնան Արք. Տէր-տէրեան: Կոմիտասեան քառամասն երգեցողութիւնը կատարուեցաւ խմբավարութեամբ Ստեփան Սրկ. Կէօզիւմեանի:

Ս. Պատարագին ներկայ էին Լոս Անճելոսի մօտ Հայաստանի հիւպատոս Վայրի Մկրտումեանն ու իր տիկինը, փոխ հիւպատոս՝ Ռուբէն Ստեփանեանը, Ազգային բարերարներ Վաչէ Մանուկեանը եւ Արա Աբրահամեանը, Հ.Բ.Ը.Մ.ի Կեդրոնական վարչութեան փոխ նախագահ Սինան Սինանեանը եւ այլ անձնաւորութիւններ ու խումբերամբ բազմութիւն մը: Եկեղեցի-

Շաբ.ը էջ 8

## Նախագահ Օպամա Հրաժարած է Հանդիպում ունենալ Էրտողանի հետ

Ամերիկեան «Ուոլ Սթրիթ Ճուրնը» օրաթերթի համաձայն, նախագահ Պարաք Օպամա հրաժարած է առանձին հանդիպում ունենալ Թուրքիոյ նախագահ Ռէճեփ Էրտողանի հետ, որ Ուաշինկթըն ժամանած է ներկայ գտնուելու համար միջուկային ապահովութեան համաժողովին: Օպամա նաեւ մերժած է էրտողանի հետ մասնակցելու, Մերիլենտ նահանգին մէջ նոր մզկիթի մը բացման արարողութեան:

Մզկիթի կառուցումը ֆինանսաւորումը տրամադրած է Թուրքիան:

Սպիտակ Տան բարձրաստիճան պաշտօնեաները թերթին յայտնած են որ, էրտողանի հետ չհանդիպելու Օպամայի որոշումը, սակայն, պէտք չէ դիտարկուի որպէս արհամարհանք:

Ամերիկեան ազդեցիկ թերթը կը յայտնէ որ, ամիսներ շարունակ Թուրք պաշտօնեաները փորձած են Ուաշինկթընի մէջ Օպամա-էրտողան առանձին հանդիպում կազմակերպել, սակայն արդիւնքի չեն հասած:

Թերթը կը չի շեղնէ, որ Ուաշինկթըն ու Անգարա քրդական հարցի շուրջ լուրջ տարակարծութիւններ ունին վերջին շրջանին:

Միւս կողմէ, ամերիկեան կառավարութիւնը հրահանգեց իր քաղաքացիներուն հեռանալ Թուրքիոյ հարաւային եւ արեւմտեան շրջաններէն, հոն տիրող ապահովական վիճակին պատճառաւ:

## Նախագահ Սերժ Սարգսեանի Այցը Միացեալ Նահանգներ

Հայաստանի նախագահ Սերժ Սարգսեան Մարտ 28-ին ժամանեց Միացեալ Նահանգներ, նախագահ Պարաք Օպամայի հրաւերով մասնակցելու համար Միջուկային Ապահովութեան Գագաթի Ժողովին որ տեղի պիտի ունենայ Ուաշինկթընի մէջ:

Նախ քան ժողովի բացումը ՀՀ նախագահը եղաւ Մասաչուսեթս նահանգը, ուր այցելեց հայաշատ Ուոթըրթաուն քաղաքը, ուր հիւրընկալուեցաւ Ամերիկայի հայկական գրադարան-Թանգարանէն ներս:

Նախագահ Սերժ Սարգսեան Միացեալ Նահանգներ այցի առաջին օրը եղած է նաեւ Պոստոնի Սուրբ Ստեփանոս եւ Սուրբ Երրորդութիւն հայկական եկեղեցիներէն ներս:

Նախագահ Սերժ Սարգսեան Միացեալ Նահանգներ այցի առաջին օրը եղած է նաեւ Պոստոնի Սուրբ Ստեփանոս եւ Սուրբ Երրորդութիւն հայկական եկեղեցիներէն ներս:







### ՄԱՐԻԱ ՄԵՐՐԱՆԵԱՆ ԸՆՏՐՈՒԹ Է ՅԱՅԱՍԱՆ ՅԱՄԱՅԱՅԿԱԿԱՆ ԴԻՄՆԱԴՐԱՄԻ ԱՐԵՒՍՏԵԱՆ ՇՐՋԱՆԻ ՆԱԽԱԳԱ

Հայաստան Համաճայկական Հիմնադրամի ԱՄՆ Արեւմտեան Շրջանը ուրախութեամբ կը յայտարարէ, թէ Տիկ. Մարիա Մեհրանեան Հոգաբարձական Կազմին կողմէ միաձայնօրէն ընտրուած է կազմակերպութեան նոր նախագահը: Մեհրանեան կը յաջորդէ Պրն. Անդրանիկ Պաղտասարեանին, որ իր պաշտօնավարութիւնը աւարտեց այս տարուայ սկիզբը:



Մեհրանեան 2004-էն 2008 ծառայած է որպէս Հայաստան Համաճայկական Հիմնադրամի ԱՄՆ Արեւմտեան Շրջանի նախագահը, ստեղծելով կազմակերպութեան Գործադիր Գրասենեակը եւ հիմնելով անոր զարգացման անկիւնաքարերը:

«Ինծի համար բացառիկ պատիւ է Հոգաբարձական Կազմին միաձայն վստահութեան քուէին արժանանալը», յայտնեց Մարիա Մեհրանեան. «միշտ հաւատացած եմ, որ Հիմնադրամի առանցքային նպատակներէն մէկը սփիւռքի լաւագոյն ու ամենէն փայլուն ուժերը Հայաստանի եւ Արցախի շուրջ համախմբելն է: Այսօր Հիմնադրամը իր առաջնահերթութիւնները կը վերաբնորոշէ հայրենիքի փոխուող մարտահրաւէրներուն համեմատ: Այսպէս, մինչ հայրենի կառավարութիւնը հետզհետէ աւելի մեծ թիւով խոշոր ենթակառուցներու շինարարութիւնը կը ստանձնէ, Հիմնադրամին համար կարելի կը դառնայ առաւել եւս կեդրոնանալ տնտեսական, կրթական եւ համայնքային զարգացման ծրագիրներու վրայ: Այս տիպի կեդրոնացումը կ'ենթադրէ ոչ միայն նիւթական միջոցներ, այլ նաեւ բազմաթիւ ամերիկահայերու մասնագիտական պաշարը, անգնահատելի գիտելիքն ու փորձառութիւնը, որոնք այնքա՞ն անհրաժեշտ են Հայաստանի յարատեւ զարգացման եւ համաշխարհային շուկային մէջ մրցունակութեան ապահովման համար»:

«Պրն. Պաղտասարեանի զօրաւոր հաւատքը՝ ինչ կը վերաբերի հայրենիքի իրագործումներուն թէ դիմակալած մարտահրաւէրներուն մասին սփիւռքը իրագեղ դարձնելով Հիմնադրամի գործունէութեան մէջ աւելի լայն հանրային մասնակցութիւն ներգրաւելուն, ինչպէս նաեւ Հայաստանի ու Արցախի տնտեսապէս անապահով բնակչութեանց նպաստող նոր ծրագիրներու մեկնարկումը լուրջ իրագործումներ յառաջացուցին, զուգահեռաբար արդիւնաւորելով նուիրատուներու ու հանգանակուած գումարներու զգալի աճով», յայտնեց Հայաստան Համաճայկական Հիմնադրամի գործադիր տնօրէն Արա Վարդանյան:

Հիմնադրամի նորընտիր նախագահ Տիկ. Մեհրանեան վարիչ գործընկերն ու ֆինանսական գլխաւոր պաշտօնեան է Քորտոպա Ընկերութեան՝ երկրաչափական, շինարարական տնօրինման, եւ ծրագրային տնօրինման համապարփակ ծառայութիւններ մատուցանող հաստատութիւն մը, որ մասնագիտացած է փոխարարական, կրթական, ջուրի ենթակառուցներու, եւ ջերմութի բնագաւառներուն մէջ:

Անցեալ աւելի քան 20 տարիներուն, Մեհրանեան իր գործունէութիւնը նուիրած է Քորտոպա Ընկերութիւնը Միացեալ Նահանգներու առաջնագոյն երկրաչափա-խորհրդատուական հաստատութիւններէն մէկը դարձնելու նպատակին. անոր ջանքերուն շնորհիւ է նաեւ, որ ընկերութիւնը մտած է միջազգային շուկաներ՝ ծրագրային բազմամիլիոն տոլարնոց ձեռնարկներ գլխաւորելով:

### «ՎԵՐԱՄՍԱԾԵԼ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՌՈՂՁ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ» ՆԻԻԹՈՎ ՍԵՄԻՆԱՐ ՅԱՅԿԱԶԵԱՆ ՅԱՄԱԼՍԱՐԱՆԻՆ ՄԷՋ



Հովանաւորութեամբ եւ ներկայութեամբ Լիբանանի Կրթական Նախարարութեան ընդհանուր տնօրէն Պրն. Ֆատի Եարաքի, Հայկազեան Համալսարանի Մանկավարժութեան բաժանմունքը կազմակերպած էր սեմինար մը՝ «Վերամտածել Քաղաքացիական Առողջ Դաստիարակութեան Մասին» նիւթով: Սեմինարը տեղի ունեցաւ համալսարանի հանդիսասրահին մէջ, Հինգշաբթի 17 Մարտ 2016-ին, ներկայութեամբ Լիբանանի մէջ Ամերիկեան դեսպանատան, Լիբանանի կենսոլորտի եւ արդարագատութեան նախարարութիւններու ներկայացուցիչներուն, ինչպէս նաեւ կրթական կազմակերպութիւններու եւ հաստատութիւններու տնօրէններու, ներկայացուցիչներու, համալսարանական դասախօսներու եւ ուսանողներու:

Սոյն սեմինարը կազմակերպուած էր Canadian Journal of Science, Mathematics and Technology Education հանդէսի յատուկ թիւի հրատարակման առիթով: Յատուկ թիւը կ'արժարծէ վերոնշեալ նիւթը եւ անոր խմբագիրներն են՝ Դոկտ. Յակոբ Ա. Եագուպեան եւ Դոկտ. Ճէս Պագուլ: Սեմինարի բացումը կատարեց եւ բարի գալուստի խօսքը փոխանցեց Հայկազեան Համալսարանի Արուեստից եւ Գիտութեանց բաժանմունքի տեսուչ՝ Դոկտ. Արտա Էքմեքճի, որ անդրադարձաւ կրթական համակարգերը որակական վերատեսուցեան ենթարկելու անհրաժեշտութեան՝ ի նպաստ առողջ անհատներու կազմաւորման: Այս ծիրին մէջ, Դոկտ. Էքմեքճի ի մասնաւորի շեշտեց քաղաքացիական կրթութեան վերապահուած դերի կարեւորութիւնը՝ փայլուն ապագայի կերտման ի խնդիր:

Իր խօսքին մէջ, Ֆատի Եարաք անդրադարձաւ կրթական նախարարութեան ունեցած որոշիչ դերին՝ տիպար քաղաքացիներ պատրաստելու գործընթացին մէջ, եւ ընկերութեան մէջ անոնց գործօն մասնակցութիւնը ապահովելու գծով: Սեմինարը վարեց Հայկազեան Համալսարանի դասախօս Ծաղիկ Գանտահարեան - Խիւտապերտեան: Յաջորդաբար խօսք աւելին Պէյրութի Ամերիկեան Համալսարանի Մանկավարժութեան բաժանմունքի դասախօս՝ Դոկտ. Սաուվա Պուժաուտէ, Գանատայի Ռէճայնա համալսարանի Մանկավարժութեան բաժանմունքի դասախօս՝ Դոկտ. Ճէս Պագուլ, եւ Հայկազեան Համալսարանի Մանկավարժութեան բաժանմունքի վարիչ՝ Դոկտ. Յակոբ Եագուպեան: Դոկտ. Պուժաուտէ ներ-

կայացուց վերոնշեալ հանդէսի յատուկ թիւը եւ փոխանցեց իր վերլուծական նկատողութիւնները՝ անոր վերաբերեալ: Դոկտ. Պագուլ ներկայացուց հանդէսի յատուկ թիւին բխած կիրառական առաջարկներ՝ կրթական համակարգերու եւ դաստիարակութեան մարզին վերաբերող: Իսկ Դոկտ. Եագուպեան խօսեցաւ տուեալ հանդէսի թիւին բխած կիրառական առաջարկներու մասին՝ կրթական քաղաքականութիւններու մշակման ոլորտին մէջ:

Սեմինարի յաջորդ օրը նոյն նիւթով վարժողական աշխատանքային հանդիպում մը տեղի ունեցաւ, մասնակցութեամբ լիբանանեան վարժարաններէ ուսուցիչներու, դասանիւթերու համակարգողներու եւ համալսարանի ուսանողներու: Աշխատանքային հանդիպումը վարեց՝ Դոկտ. Ճէս Պագուլ:

Սիրիահայերի ձեռքի աշխատանքների ցուցահանդէս-տօնավաճառ՝ Սուրբ Յարութեան տօնին ընդառաջ

Մարտի 23-ին ՀՀ սփիւռքի նախարարութեան եւ «Սիրիահայերի հիմնախնդիրները համակարգող կենտրոն» ՀԿ-ի նախաձեռնութեամբ Սուրբ Յարութեան տօնին ընդառաջ ԵՊՀ Հայ բանասիրութեան ֆակուլտետի նախասրահում բացուեց աւանդական դարձած «Սիրիահայ մշակոյթի շունչը երեւանում» խորագրով բարեգործական ցուցահանդէս-տօնավաճառը:

Ցուցահանդէս-տօնավաճառ ացեւեց ՀՀ սփիւռքի նախարար Հրանուշ Յակոբեանը: Նախարարը շրջեց ցուցասրահում, ծանօթացաւ սիրիահայերի աշխատանքներին:

Լրագրողները հետ գրոցում են նախարարը նշեց. «Ինձ հիացում է սիրիահայերի աշխատասիրութիւնը, նուիրումը եւ ճաշակը: Մենք իրենցից շատ բան ունենք սովորելու, յատկապէս հայկական աւանդական ուսեստներ պատրաստելու հարցում: Կը ցանկանայի, որ մեր հասարակութիւնն առաւել ակտիւ գնումներ կատարեր: Սիրիահայերն արդէն սկսել են կենցաղային իրերի, կօշկեղէնի արտադրութիւն հիմնել, տեքստիլ արդիւնաբերութեան ոլորտում ակտիւ գործունէութիւն ծաւալել»: Նախարարը նաեւ ընդգծեց, որ աճել է ցուցահանդէսի մասնակիցների թիւը, եւ եթէ առաջին ցուցահանդէսին 10-12 սիրիահայ է մասնակցել, այս Մարտի 23-ի ցուցահանդէսի մասնակիցների թիւը հասել է 52-ի:

Ցուցահանդէսին ներկայացուած էին 50-ից աւելի սիրիահայերի ձեռագործ աշխատանքներ:

# ՄԱՍԻՍ

## ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

### ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՏՐՕՆ

---

Yes, I wish to subscribe to Massis Weekly  
Enclosed a check for (one year)

\* \$50,00 \* \$100,00 (first class) for USA  
\$ 125,00 (Air Mail) for Canada.  
\$ 250,00 (Air Mail) Overseas.

Name: -----

Address: -----

City: ----- State:----- Zip Code:-----

Country: -----

Tel :----- Email: -----

# ՀԱՅ ԻՆՔՆՈՒԹԵԱՆ ԸՍԲՈՆՈՒՄԸ ԹՈՒՐԻՔԻՈՅ ՀԱՍԱՐԱԿՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԷ



Ա.Լ.ՊԷՐ ՔԷՇԻՇ

Թուրքիոյ բնակչութիւնը միաձայնութեամբ կաղապարուած հասարակութիւն մը չէ: Տարբեր գաղափարախօսութեան եւ մտայնութեան տէր անձինք՝ բնականաբար զանազան կարծիքներ կը յայտնեն տարբեր նիւթերու շուրջ, նաեւ՝ հայ ինքնութեան մասին: Որպէս պոլսահայ՝ կը փափաքեմ ներքին հայեացքով մը բնութագրել խնդրոյ առարկայ պառակտումը՝ յաճախակի արտայայտուող ասութիւններու լոյսին տակ:

### «Հայերը անխտիր մեր թշնամին են»

Այս տեսութիւնը կը պատկանի ազգայնամուլ եւ ցեղապաշտ խմբակներուն, որոնք ձայնը շատ աւելի լսելի է քան թէ բնակչութեան համեստ հատուածը: Անոնց մեծամասնութիւնը, ո՛չ հանդիպում մը ունեցած է հայու մը հետ, եւ ոչ ալ ծանօթութիւն: Պատրաստ է բոլոր բացասական երեւոյթները հայ ազգին վերագրել: Քրտական ապստամբութեան մասնակցողներն անգամ կը նկատէ իբրեւ հայեր կամ դաւանափոխ հայեր: Նման մտայնութեան տէր անձանց համար միայն հայերը չեն, որ թշնամի կը համարուին, այլ բոլոր ոչ թուրք ցեղերը: Իրենց յայտնի կարգախօսն է՝ «Թուրքին միակ բարեկամը թուրքն է»:

### «Հայերը մեր թշնամին են՝ բացի Թուրքիոյ հայերէն»

Յիշեալ տեսութիւնը կը ներկայացնէ հակասական եւ ծիծաղելի բնոյթ մը: Ան տգիտութեան դրսեւորումն է, եթէ ոչ խորամանկութեան: Ըստ երեւոյթի, Թուրքիոյ քաղաքացի հայերը պաշտպանող այս մտայնութիւնը, հիմնականօրէն կը պարունակէ խիստ հակահայ գզացում մը՝ պառակտելով աշխարհի համայն հայութիւնը, իբրեւ պոլսահայեր եւ մնացեալները: Միաժամանակ զանց առնելով այն իրողութիւնը, որ պոլսահայերը մօտիկ հարազատներ ունին Հայաստանի եւ սփիւռքի մէջ՝ մաս կազմելով համայն հայութեան:

### «Մեր միակ հակառակորդը սփիւռքահայութիւնն է»

Այս մտայնութեան համաձայն՝

եթէ սփիւռքը չլինէր, շատ աւելի դիւրութեամբ կը կարգաւորուէր Հայաստանի եւ Թուրքիոյ միջեւ կայացած հարցերը: Սփիւռքի միջամտութիւնն է, որ կը բարդացնէ հայոց եւ Թուրքիոյ միջեւ ծագում առած առկայ եւ պատմական հակամարտութիւնները, որ կը ստանան անլուծելի բնոյթ: Այսպիսով, սփիւռքը կը ստանայ սատանայական յատկանիշ մը:

### «Հայերը վստահելի են»

Կան տարբեր խաւերու եւ աշխարհահայեացքի պատկանող մարդիկ, որոնք համակարծիք են այս տեսակէտին հետ: Անոնք ընդհանրապէս ծանօթացած են մօտիկ հայ ընկերներու եւ հարեւաններու հետ՝ ունենալով զանազան յարաբերութիւններ եւ շփումներ: Կը նախընտրեն հայ դայեակներու վստահիլ իրենց երախտները: Առեւտուրի, բժշկութեան եւ մասնագիտական այլ մարզերու մէջ ալ առաջնահերթութիւնը կու տան հայերուն՝ նման զգացումներով:

### «Հայերը անվստահելի են»

Սոյն ժխտական մտածելակերպի տէր անհատները, վերոյիշեալ նկարագրումին ընդհակառակը կը ներկայացնեն: Ըստ իրենց՝ հայերը անվստահելի տարրեր են այն առումով, որ պետութեան կը դաւաճանեն առաջին իսկ առիթով: Այս մտայնութիւնով նախապաշարուած անձինք, հայերը շատ անգամ կ'երեւակայեն իբրեւ Թուրքիոյ թշնամի երկիրներու ներքին սպասարկողները: Ընդհանրապէս կը խուսափին հայոց հետ շփուելէ եւ շատ անգամ կը մասնակցին հակահայ քարոզչութեան:

### «Հայերը օտարներ են»

Այս տեսութեան համաձայն՝ հայերը Թուրքիոյ տարածքին վրայ բնակող տեղացի եւ հարազատ ժողովուրդ մը չեն: Սոյն տեսութիւնը պաշտպանողները դիտմամբ կամ տգիտութեան պատճառաւ կը մերժեն հայոց պատմական ներկայութիւնը: Պոլսահայերը կը ներկայացուին իբրեւ այլ երկիրներու քաղաքացիներ, որոնք անցողական ժամանակաշրջանի մը համար կը բնակին Թուրքիոյ տարածքին վրայ: Այս ընկալումը յատկապէս վերջին տասնամեակներուն տարածուեցաւ՝

հայ բնակչութեան նուազման եւ պատմութեան խեղաթիւրման առընթեր:

### «Հայերը բնիկներ են»

Ուսեալ եւ քաղաքակիրթ քաղաքացիներու կարեւոր մէկ մասը իրագրէ է հայոց պատմական ներկայութեան: Անոնք գիտակցաբար կ'ընդունին եւ կը յայտարարեն, որ հայ ազգը երկրի աշխարհագրական տարածքին վրայ բնակած հնագոյն ժողովուրդներէն մէկը եղած է: Անպատեհութիւն չեն տեսներ հայոց պատմական կառուցներու եւ այլ հետքերու բացայայտումին մէջ:

### «Հայերը բազմահմուտ են»

Հայոց զանազան բնագաւառներու մէջ բերած մեծ նպաստը եւ արձանագրած յաջողութիւնները անհերքելի իրողութիւն մըն են բոլոր անոնց համար, որոնք կուրացած չեն հայատեացութեան ախտով: Բացի ծայրայեղ ազգայնամոլներէ, ո՛չ ոք կը մերժէ հայ արուեստի կոթողները, որոնք նկատելի են ամէնուր: Երաժշտանոցներու եւ նուագախումբերու անդամներուն մէջ նկատելի են նաեւ հայ երաժշտագէտներ, որոնք շատ կարեւոր դերքեր կը գրաւեն այս ասպարէզին մէջ: Բժշկութեան, արհեստագործութեան եւ լեզուագիտութեան նման բազմաթիւ այլ մարզերու մէջ ալ անժխտելի է հայոց նպաստը:

### «Հայերը հարուստ են»

Ինձ այդպէս կը թուի, թէ այս տպաւորութիւնը հասարակ բնոյթ մը ստացած է ամբողջ Թուրքիոյ բնակչութեան մօտ: Հայերը ընդհանուր առմամբ կը նկարագրուին իբրեւ հարուստ համայնք մը, ուր չքաւորներ բնաւ գոյութիւն չունին: Ինչպէս Թուրքիոյ ընդհանուր հասարակութիւնը, հայ համայնքն ալ կը բաղկանայ տարբեր տնտեսական դասակարգերէ եւ խաւերէ: Եկեղեցիներու աղքատախնամի

մարմինները կը գործեն այս առաքելութիւնով, որ շատ անգամ բաւարար չէ իրենց գործունէութիւնը՝ սահմանափակ նիւթական կարելիութիւններու պատճառաւ: Ինչպէս նաեւ՝ համայնքի վարժարանները եւ հիւանդանոցը կը ջանան բոլոր կարիքաւոր ընտանիքներուն ճիւղաբար սպասարկել: Հոս պէտք է շեշտել պոլսահայ համայնքին այն սխալ ընթացքը, որ պատճառ կը դառնայ անհիմն տպաւորութիւններու: Մենք որպէս համայնք շատ կը սիրենք ճոխ կենցաղ մը ներկայացնել: Մեր այս թերութիւնը հարեւան ժողովուրդին նկատողութենէն չի վրիպիր եւ տեղի կու տայ նախապաշարումներու եւ նախանձութիւններու: Հարստութիւնը աւելի երեւելի է մեր մօտ քան չքաւորութիւնը: Մեր փոքրիկ համայնքին համար պատեհ կը համարեմ համեստ կեանք մը վարել եւ մեր ներուժը կեդրոնացնել մասնագիտական յաջողութիւններու ու ձեռքբերումներու վրայ:

Վերոյիշեալ օրինակները կարելի է բազմացնել: Հայոց ինքնութեան հանդէպ Թուրքիոյ բնակչութեան ցուցաբերած զանազան եւ երբեմն իրարու հակասող ընկալումը ասպացոյցն է մտայնի պառակտումի մը, որ յառաջ կու գայ համատարած հակահայ քարոզչութեան պատճառաւ: Այս քարոզչութիւնը կը բխի յատկապէս ազդեցիկ զանգուածային լրատուական միջոցներէն եւ կրթական համակարգի առկայ իրավիճակէն: Յիշեալ ազդակները մէկ այլ գրութեան նիւթը կրնան դառնալ՝ իրենց ընդարձակ եւ լայնածաւալ հանգամանքով: Յամենայնդէպս, հայոց նկատմամբ անցեալի խաւար մթնոլորտով ու մտայնութիւնով պայմանաւորուած հասարակութիւնը սկսած է պառակտուել՝ իր հետ պառակտելով նախապաշարումները՝ հայ եւ Թուրք յառաջադէմ ու լայնախորհ մարդկանց մղած երկարաշունչ պայքարով:

«ԱՐԵՒԵԼՔ»


  
**ՀԱՅՈՑ ՊԱՀԱՁԱՏԻՐՈՒԹԻՒՆԸ**  
**100-ԱՄԵԱԿԷՆ ԵՏՔ**  
 սեմինար կազմակերպութեամբ՝  
**ՀԱՅՈՑ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՈԳԵԿՈՉՄԱՆ ԼՈՍ ԱՆՃԵԼՏԻ ՄԻՍՅԵԱԼ ՄԱՐՄԻ ԵՒ ՀԱՅ ԻՐԱՆԱԲԱՆՆԵՐՈՒ ՄԻՈՒԹԵԱՆ**

**Քննարկման Նիստեր**  
**Ա.** Պահանջատիրութիւնը Ուսումնասիրող Խումբի Վերլուծում Փրոֆ. Հէրի Յերիտ եւ Պրո. Արա Պապեան Համալրող Իրաւաբան Արմէն Յովհաննիսեան  
**Բ.** Օրինական Դիտանկիւն Իրաւաբաններ՝ Էրիկ Միտտան եւ Գամիլ Քերքոնեան, Համալրող Իրաւաբան Կարո Նազարեան  
**Գ.** Հայկական Կուսակցութիւններու Պատկերացում Կուսակցութիւններու Ներկայացուցիչներ Համալրող Հրաչ Մեխիթեան

**ՏԵՂԻ ԿՈՒՆԵՆԱՅ ԱՊՐԻԼ 9-ԻՆ**  
 Ժամը 10:00-էն Կէսօրէ ետք Ժամը 4:30  
 Արձանագրութիւն Ժամը 9:30-ին  
 Հայ Կաթողիկէ Ս. Գրիգոր Լոսավորիչ Եկեղեցւոյ Մրահ  
 1510 E. Mountain St., Glendale, CA 91207  
 Ձովաւցուցիչներու եւ Սուրճի Հիւրասիրութիւն Կէսօրուան ճաշի Պատուէր՝ \$15.00

**SEROP'S CAFE**  
**GREEK & LEBANESE FOOD**  
 SERVING BATON ROUGE SINCE 1979

# Ն.Ս.Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՅԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՊԱՏԳԱՍԸ ՄԵՐ ՏԵՐ ՏԻՐ ՅԻՍՈՒՄ ԲՐԻՍՏՈՍԻ ՍՈՒՐԲ ՅԱՐՈՒԹԵԱՆ ՏՕՆԻ ԱՌԻԹՈՎ



Յանուն Հօր եւ Որդուց եւ Հոգուցն Սրբոց. ամէն:

«Յարեաւ ի մեռելոց Քրիստոս,

Այսօր զգժոխս աւերեալ, եւ կենդանութիւն պարգեւեցեր

Արարածոց քոյով յարութեամբը»

(Շարական):

Սիրելի հաւատաւոր զաւակներ Մեր ի Հայաստան, Արցախ եւ ի Սփիւռս,

Այսօր՝ Սուրբ Յարութեան բերկրալի տօնին, շարականագրի խօսքերով փառաբանում ենք մեր Տիրոջն ու Փրկչին, որ յարութիւն առաւ մեռելներից, աւերեց դժոխքը եւ իր Յարութեամբ արարածների կենդանութիւն պարգեւեց:

Քրիստոսի Յարութիւնը մահուան խաւարի մէջ ծագեցրեց լոյսը յաւիտենութեան, մարդկանց պարգեւեց երկնքի արքայութեան պարտիւնը, շնորհ՝ յարուցեալ կեանքի այս աշխարհում եւ հանդերձեալում: Քրիստոսի Յարութեամբ նոր արարչութիւն է, նոր մարդկութիւն, որը մեղքի եւ մահուան նզովքից ազատ՝ շնորհի մէջ է Աստուծով ապրելու եւ յաւիտենական կեանքին արժանանալու: Առաքեալի խօսքի համաձայն՝ «Հինն անցաւ, եւ հիմա ամէն ինչ նոր եղաւ» (Բ Կոր. Ե 17), քանզի Աստուծոյ Միածին Որդին, Փրկիչ մեր Տէրը «կործանեց մահը եւ լուսաւոր դարձրեց կեանքն ու անմահութիւնը Աւետարանի միջոցով» (Բ Տիմ. Ա 17): Քրիստոսի Աւետարանը յարութեան Աւետարանն է, յաւիտենութեան Աւետարանն է, կեանքի Աւետարանն է, որի միջոցով է մեզ հասու Աստուծոյ անսահման սիրոյ իմացութիւնը, հոգիները կենդանացնող տէրունական ձայնը, Քրիստոսի Յարութեան ճշմարտութիւնը:

Այսօր Տիրոջ հրաշափառ Յարութեան խորհրդի առջեւ բնականից բարձրանում է հարցը՝ որքանով ենք ապրում Քրիստոսով նորոգուած կեանքով, ընթանում Փրկչի խօսքի եւ պատուիրանների համաձայն: Ի՞նչն ենք կարեւորում մեր կեանքում՝ յարութեան Աւետարանը, թէ՛ մոլոր վարդապետութիւններ եւ խաբեպատիր գաղափարախօսութիւններ, Տիրոջ կամքին հետեւե՞լը, թէ՛ մեղակորոյց, կենսակործան ճանապարհները, երկնքում գանձեր դիզե՞լը, թէ՛ շահատենչութիւնը, հոգեւոր ազատութիւնը, թէ՛ սանձարձակութիւնը, ազնուութիւնն ու ուղ-

ղամտութիւնը, թէ՛ պիղատոսեան թուացեալ արդարութիւնը, եւ վերջապէս՝ նախըտրում ենք Յիսուսին, թէ՛ աւազակ Բարաբբային:

Գիտութեան, կրթութեան անօրինակ առաջընթացի հետ մեր ժամանակներում ակնատեսն ենք նաեւ աւանդական արժեհամակարգի փլուզման, մարդու բարոյական անկման եւ հոգեւոր սնանկացման երեւոյթների: Կեանքի յարմարաւէտութեան, արագահասութեան հնարաւորութիւնների պայմաններում նոյնիսկ՝ մարդիկ, անգամ ընտանիքի անդամներ, օտարանում են միմեանցից: Բարիքների առատութեան մէջ ոչ թէ կարիքն ու թշուառութիւնն են վերանում, այլ խորանում է հասարակութեան բեւեռացումը: Տեխնոլոգիաների առաջընթացը կեանքի դիւրութիւններ ստեղծելու հետ հանգեցնում է նաեւ նոր հնարանքերով ընթացող պատերազմների եւ ահաբեկչութիւնների, որոնք շարունակաբար ցնցում են աշխարհը՝ դառնալով համընդհանուր սպառնալիք մարդկութեան համար: Նման իրողութիւնների առջեւ եւ մշտապէս, սիրելի բարեպաշտ ժողովուրդ, հարկ է անդրադառնալ եւ բարձրաձայնել աստուածային արդարութեան ու հատուցման մասին այս աշխարհում եւ հանդերձեալում, որը վերահաս է բոլոր անհատներին ու ժողովուրդներին: Արդարեւ, քրիստոսապարգեւ յարութիւնը միայն շնորհ է, այլեւ՝ դատաստան, ինչպէս ասում է Աւե-

տարանը. «Կը գայ ժամանակ, երբ բոլոր նրանք, որ գերեզմաններում են, կը լսեն Նրա ձայնը եւ դուրս կը գան. ովքեր բարի գործեր են արել՝ կեանքի յարութեան համար, իսկ ովքեր չար գործեր են արել՝ դատաստանի յարութեան համար» (Յովհ. Ե 28-29): Յարութեան, կեանքի ճանապարհը հրաժարումն է այն ամենից, ինչը դարձնում է գերի մեղքին, քանզի «մեղքի վարձը մահն է, իսկ Աստուծոյ շնորհը՝ յաւիտենական կեանք» (Հռոմ. 2 23): Այս իմաստով է առաքեալը կարեւորում երկնայինը հազնելը, «որպէսզի ինչ-որ մահկանացու է, կլանուի կեանքից» (Բ Կոր. Ե 4): Մահը կլանող կեանքը դա կեանքն է հոգեւոր լիութեան, ձգտումն ու ջանքը՝ մտքով, սրտով, հոգու ողջ զօրութեամբ Աստուծով ապրելու, ապրելու Աւետարանի պատգամներով, որոնք յարուցեալ կեանքի ուժն են ներարկում Քրիստոսին ապաւինած անձանց ու ժողովուրդներին:

Տագնապներով ու ցնցումներով լի աշխարհը, նաեւ մեր իրականութիւնը, որ նոյնպէս բազմահոգ է դժուարութիւններով ու խնդիրներով, կարող են վերափոխուել քրիստոսաշնորհ հոգեւոր լիութեան կեանքով, յաղթահարելով մարդկային ցաւերն ու ողբերգութիւնները եւ ամենուր հաստատելով հիմքերը ապահովութեան ու բարօրութեան: Քրիստոսի Յարութիւնը մշտահունչ հրաւիր է, որ աշխարհը վեր յառնի մեղքից դէպի շնորհ, եւ ամենայն մահափիւռ, աւերիչ իրողութիւն կլանուի Աստուծով ապրող եւ առաջնորդող կեանքից: Քրիստոսի Յարութիւնը հիմքն ու հաստատութիւնն է հաւատքի, որ լուսաւորում է մարդկանց սրտերը, ներդրութիւնների յորձանտումը շնորհում յոյս ու մխիթարութիւն, տառապանքների գողգոթաներում՝ յառնելու ուժ եւ զօրութիւն, պարգեւում խորիստ ու արիասիրտ ոգի՝ արդար մարտնչումներում, նուիրումի ոգեշնչում, բերկրանք ու խնդութիւն՝ ապրելու եւ արարելու: Այս ոգին ու ընթացքը հարազատ են եւ բնորոշ մեր ժողովուրդին, մեր կեանքին ու պատմութեանը եւ լուսաւորում են մեր ներկան ու ապագան: Վերյառնելու, դժուարութիւնների առջեւ չընկրկելու, նոր կեանք կերտելու վկայութիւնը մեր ժողովուրդը բերեց վերահաստատելով մեր անկախ պետականութիւնը, որի 25-ամեայ տարեդարձն է այս տարի: Մեր հայրենիքի զօրացմանը, հա-

մազգային մեր կեանքի շինութեանն ու պայծառութեանն ուղղուած մեր ջանքերում եւ այսօր ծառայած մարտահրաւիրների առջեւ, սիրելիներ, Քրիստոսի Յարութեան հաւատքն ու լոյսն ունենք մեզ առաջնորդող, արդ, մեր կեանքը լցնենք մեր Տիրոջ սիրով, միմեանց զօրակցութեամբ, աւետիսներով բարի գործերի: Զատկական խորհրդով այսօր մեր հոգիներին շողում է քրիստոսապարգեւ յարութեան երկնային շնորհը, որը դրոշմուում է մեր կեանքին, երբ ապրում ենք հաւատքով ու քրիստոնէական արժէքներով, մեր մերձակներով, մեր ժողովուրդի, հայրենիքի ու մեր Սուրբ Եկեղեցու համար: Միածնաէջ այս Սուրբ Տաճարում աղօթում եւ մաղթում ենք, որ մեր ժողովուրդի ամէն զաւակ Քրիստոսի Յարութեան աւետիսն ընդունի նորոգուած հաւատքով, եւ մենք՝ իբրեւ ազգ, առ Քրիստոս մեր Տէրը սիրով, մեր արդար ու արժանաւոր գործերով միշտ ընթանալով առաջընթացի ուղիով՝ մեր շուրթերին ունենալով մշտահունչ փառաբանութիւնը.

«Յարեալ ի մեռելոց Քրիստոս,

Այսօր զգժոխս աւերեալ, եւ կենդանութիւն պարգեւեցեր

Արարածոց քոյով յարութեամբը»:

Քրիստոսի Սուրբ Յարութեան տօնի ուրախութիւնը մեր սրտում ողջուն ենք յղում Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու Նուիրապետական Աթոռների Գահակալներին՝ Ն. Ս. Օ. Տ. Արամ Ա Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսին, Երուսաղէմի Հայոց Պատրիարք Ամենապատիւ Տ. Նուրհան Արքեպիսկոպոս Մանուկեանին, Կոստանդնուպոլսի Հայոց Պատրիարք Ամենապատիւ Տ. Մեսրոպ Արքեպիսկոպոս Մովսէսֆեանին եւ մեր Եկեղեցու ուխտապահ ողջ հոգեւոր դասին:

Ի Քրիստոս սիրով ողջունում ենք Քոյր Եկեղեցիների հոգեւոր Պետերին՝ յարուցեալ Քրիստոսի երկնահեղ բիւր շնորհները հայցելով Տիրախնամ նրանց հօտին:

Սուրբ Յարութեան աւետիսով Մեր ողջունն ու բարեմաղթանքներն ենք բերում Հայաստանի Հանրապետութեան Նախագահ՝ Տիրա Սերժ Սարգսեանին, Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան Նախագահ՝ Տիրա Բակո Սահակեանին, հայոց պետական ողջ աւագանուն,

Տար.ը էջ 8

**ԿԱՅԾ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆ**  
ԿԸ ՆԵՐԿԱՅԱՑՆԷ ՀԱՅ ՖԻԼՄԻ ՓԱՌԱՏՈՆ, Տեղի Կ՝ուսնեայ Ամսուայ Առաջին Եւ Երրորդ Հինգշաբթի Օրերը  
**ՀԱՅ ՎԱԿԵՐԱԳՐԱԿԱՆ ՖԻԼՄ**  
Հինգշաբթի 7 Ապրիլ 2016, երեկոյան ժամը 7:30-ին  
ՀԿՔՄ Սոցիալական Սրահէն. 1060 N. Allan Ave., Pasadena, CA  
Մուտք՝ նուիրատուութիւն

**ՄԵԾ ԵՂԵՌՆ**  
**YEGHERN**

**GAIDZ Youth Organization – PRESENTS - GAIDZ Movie Night**  
ARMENIAN Film Festival; Every 1<sup>ST</sup> & 3<sup>RD</sup> Thursdays of Every Month  
ARMENIAN DOCUMENTARY MOVIE; Thursday, April 7, 2016 at 7:30 pm  
AEBU Soghanalians Hall, 1060 N. Allan Avenue, Pasadena, CA. Entrance Fee: DONATION





# Massis Weekly

Volume 36, No. 12

Saturday, April 2, 2016

## President Sarkisian Visits Watertown and Boston



BOSTON -- Armenian President Serzh Sarkisian's working visit to the United States kicked off on Monday.

In the State of Massachusetts, the Armenian leader visited Watertown, which has a large Armenian community. There, he was hosted at the Armenian Library and Museum of America, where he toured the library-museum and spoke with the persons in charge of this institution. Sarkisian also visited Armenian community centers.

On the first day of his visit to the

United States, President Sarkisian visited also the Armenian Churches of Saint Stepanos and Saint Trinity. In 1991 at the proposal of the Armenian community of Watertown, the Saint Stepanos street was renamed into Artsakh street, while on August 6, 2012 the House of Representatives of Massachusetts adopted a resolution urging the President of the United States and Congress to support independence of Nagorno Karabakh and its right for self-determination.

## Armenian Civilian Wounded by Azerbaijani Fire



YEREVAN (RFE/RL) -- Three Azerbaijani soldiers have reportedly been killed in action after the Armenian military accused Baku of again intensifying ceasefire violations in the Nagorno-Karabakh conflict zone late last week.

The Azerbaijani Defense Ministry said on Monday that two of those soldiers, one of them a lieutenant, died on Sunday when Armenian troops "attempted to invade" the Gazakh district in western Azerbaijan bordering Armenia's northern Tavush province.

The combat deaths were announced two days after an Armenian soldier serving in the area was wounded and hospitalized as a result.

Another Armenian, a 64-year-old civilian resident of Berkaber village close to the Azerbaijani border, was wounded by cross-border gunfire late on Friday. He too required hospitalization.

The third Azerbaijani casualty, an army sergeant, was reportedly shot dead on Friday. The Azerbaijani military did not specify whether he died on the Armenian-Azerbaijani border or "the line of contact" around Karabakh.

According to Karabakh's Armenian-backed Defense Army, fighting along "the line of contact" intensified on Friday night and Saturday morning, with Azerbaijani forces firing more

Continued on page 3

## Diyarbakir Surp Giragos Armenian Church Expropriated by Turkish Authorities



ISTANBUL (Agos) -- While clashes and curfews continue in Diyarbakir, the Turkish cabinet took an urgent expropriation decision. Surp Giragos Church, the largest Armenian church in Middle East, is among the places in Sur province of Diyarbakir that are expropriated by the decision of the cabinet. Left to its own fate for years, the church was finally restored and opened to worship in 2011. With the same decision, Assyrian, Chaldean and Protestant churches are also expropriated.

According to the cabinet decision published in Official Journal on March 25, an "urgent expropriation" decision is taken concerning 6.300 plots of land in Sur province. With this decision, many places in Abdaldede, Alipasa, Cemal Yilmaz, Camikebir, Cevatpasa, Dabanoglu, Hasirli, Inönü, Iskenderpasa, Lalebey, Malikahmet, Özdemir, Süleymanoglu, Savas, Semhane and Ziyagökalp neighborhoods and two neighborhoods in Yenisehir province are expropriated.

Surp Giragos Church, the largest Armenian church in Middle East, Surp Sarkis Chaldean Church, Armenian Catholic Church, Virgin Mary Ancient Assyrian Church and Protestant Church are among the places that are expropriated.

Speaking to Agos, Diyarbakir Metropolitan Municipality Cultural Heritage Director Nevin Soylukaya stated that all churches and properties belonging to the foundations are expropriated. Soylukaya also said that some properties belonging to the municipality are also expropriated and they will initiate legal action. She also urged the owners of the expropriated properties to take legal action.

Walls of Diyarbakir and Hevsel Gardens were added to UNESCO World Heritage List in 2015. And Sur province is considered as a buffer zone for Walls of Diyarbakir.

Sur is the only center that have places of worship for non-Muslims.

Continued on page 3

## Maria Mehranian Elected President of Armenia Fund

LOS ANGELES, CA - Armenia Fund, Inc., the U.S. Western Region affiliate of Hayastan All Armenian Fund has announced that its Corporate Board unanimously elected Mrs. Maria Mehranian as the organization's new Chairperson. Mehranian succeeds Mr. Antranik Baghdassarian, who completed his tenure in early 2016.

"Mr. Baghdassarian's strong belief in attracting a larger public participation through educating the Armenian Diaspora on Armenia's successes as well as the challenges facing our Homeland, introduction of new projects benefitting residents of Armenia and Artsakh who are faced with economic hardship proved successful and resulted in a serious increase both in the number of donors and collected funds. We thank Mr. Baghdassarian for his years of dedicated service to Armenia Fund as well as for his very generous



support of the organization." - said Ara Vardanyan, Executive Director of Hayastan All-Armenian Fund.

Newly elected President, Mrs. Mehranian is the Managing Partner

Continued on page 4

## Members of Congress Request Assistance for Armenia, Nagorno Karabakh



WASHINGTON, D.C. - 33 Members of Congress have sent a letter to the Appropriations Subcommittee on State, Foreign Operations, and Related Programs Chairwoman Kay Granger (R-TX) and Ranking Member Nita Lowey (D-NY) in support of continued U.S. assistance in the Fiscal Year (FY) 2017 budget for the Republics of Armenia and Nagorno Karabakh, the Samtskhe-Javakheti region of Georgia, and at-risk minorities in the Middle East, reports the Armenian Assembly of America (Assembly). "Continued U.S. support in the region is critically important," the letter read.

Members of Congress requested at least \$5 million for humanitarian and development programs in Nagorno Karabakh, appropriating no less than \$40 million in overall economic aid (including Economic Support Fund, International Narcotics Control and Law Enforcement, and Global Health Programs) for Armenia, suspending all military aid to Azerbaijan, allocating at least 10 percent of aid given to Georgia towards funding sustainable job-creation programs in Samtskhe-Javakheti, enhancing Section 907 of the FREEDOM Support Act, and reinstating Karabakh in the Organization for Security and Co-operation in Europe (OSCE) Minsk Group peace process as a full negotiating partner.

The letter calls for a stronger U.S. stance regarding Azerbaijan's in-

creasing number of hostile acts against Armenia and Nagorno Karabakh. Earlier this month, the Obama Administration released its budget for the upcoming year, maintaining a military parity between Armenia and Azerbaijan at \$1 million for Foreign Military Financing (FMF) and \$600,000 for International Military Education and Training (IMET), a decrease from the previous year. The letter recommends a suspension of U.S. military aid to Azerbaijan "until its government ceases cross-border attacks, ends its threat of renewed war, and agrees to a settlement of regional conflicts through peaceful means." Members of Congress are also requesting supplemental language to strengthen Section 907 of the FREEDOM Support Act.

U.S. priority focuses on a peaceful settlement of the Karabakh conflict, yet the letter points out that Karabakh government officials have been excluded from the peace process since 1998. "Nagorno Karabakh should, in the interests of peace and basic fairness, be permitted to fully participate in all talks regarding its future. The best and most sustainable path to peace requires direct engagement with the people and government of Nagorno Karabakh, whose fate and future are the subject of ongoing talks and whose security will rest on the outcome of these negotiations," the letter reads.

## Armenia Declines Granting Refugee Status to Afghans who Illegally Crossed Border

YEREVAN (News.am) -- The Armenian State Migration Agency (SMA) has not granted refugee status to Afghanistan citizens Shokat Aminzai -a Turk- and Sediqhollah Alizadeh -an Afghan-, who had illegally crossed the Turkey-Armenia border.

Head of the SMA Asylum Affairs Division, Petros Aghababian stated that "The commission examined and rejected their petitions, since the [respective] data did not meet the requirements of our legislation."

The next court hearing in the case involving Aminzai and Alizadeh is scheduled for April 1.

Shokat Aminzai and Sediqhollah Alizadeh had testified that they had fled

their country, found themselves in a third country, and at first they did not even know which country's border they were crossing. They had petitioned to Armenia, with a request for being granted refugee status.

They are charged with illegally crossing the Armenian border, and their case is in court.

According to the indictment, Shokat Aminzai had reached a preliminary agreement with Sediqhollah Alizadeh, and they crossed the Turkish-Armenian border on October 6, 2015. But they were apprehended by the Armenian border service officers. A criminal charge was brought against them, and arrest was enforced as their restraining order.

## Armenia and Georgia to Continue Developing Bilateral Cooperation



YEREVAN -- Armenia's membership in a Russian-led trade bloc and Georgia's Association Agreement with the European Union can be used for deepening relations between the two neighboring states, Georgian Foreign Minister Mikheil Janelidze said during a visit to Yerevan on Friday.

Janelidze and President Serzh Sargsian were reported to agree that Armenia and Georgia have a "great potential for developing bilateral cooperation also within the framework of those different integration processes."

"The two sides believe that this will elevate Armenian-Georgian relations to a qualitatively new level," Sargsian's office said in a statement on the talks held by the two men.

Janelidze also discussed the matter at a separate meeting with his Armenian counterpart Edward Nalbandian earlier in the day. "We have talked about how we could use those integration processes to the benefit of our cooperation and joint projects," he told a joint news conference with Nalbandian.

"There are no problems between Armenia and Georgia," Nalbandian said for his part. "There are issues that are being solved with joint efforts."

The Armenian minister added that they touched, among other things, on possible joint projects on transport

infrastructure, trade and energy. But he gave no details.

There was no word on ongoing negotiations between Armenia, Georgia, Russia and Iran on the possibility boosting power supplies among their countries. Top energy officials from the four states are due to hold further talks on the issue in Tbilisi next month.

Armenia and Georgia are due to construct by 2018 a new electricity transmission line that will make their power grids more interconnected. The \$115 million project, is financed by Germany's state-run development bank KfW and the European Union.

Armenia is also building a similar line that will connect it to Iran.

